

**ԳՐԱԲԱՐԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ
Ա. ԱՅՏԸՆՅԱՆԻ «ՔՆՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԿԱՄ
ԱՐԴԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

ԱՍՈՅԱՆ ԹԱԹՈՒԼ

*Քանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
քանասիրական ֆակուլտետի դեկան
e-mail: asoyan.60@mail.ru*

Նոր գրական հայերենի զարգացման ընթացքը շատ կողմերով պայմանավորված է եղել պատմական, հասարակական-քաղաքական իրավիճակով, մտավորականության, մշակութային գործիչների կողմնորոշումներով: Արևմտահայերենի՝ որպես նոր գրական հայերենի դրսևորման ձևավորման և զարգացման և կանոնարկման խնդիրներով շատ են զբաղվել Մխիթարյան միաբանության ներկայացուցիչները, սակայն նրանց գործունեությունը այդ ոլորտում ընթացել է նոր ու հին գրական լեզուների համեմատության, գնահատման և ըստ այդմ էլ՝ գործնական կիրառության հակադրման ճանապարհով:

Հոդվածում ներկայացվում են Վիեննայի Մխիթարյան միաբանության հայրնի անդամ Ա. Այրընյանի հայացքները հայերենի պատմական զարգացման ու փոփոխությունների, հին ու նոր գրական լեզուների, նրանց լեզվական առանձնահատկությունների և կիրառության հասարակական ու անձնական ընկալումների վերաբերյալ: Ցույց է տրվում լեզվաբանի անկողմնակալ մոտեցումը արևմտահայ մտավորականությանը հուզող կարևորագույն հարցերի նկատմամբ: Այս տեսակետից հայերենագիտության մեջ խիստ արժեքավոր ներդրում է Ա. Այրընյանի «Քննական քերականություն»-ը:

Բանալի բառեր՝ նոր հայերեն, գրաբար, լեզվաբան, Մխիթարյաններ, քերականություն, լեզվական հայացքներ, «Քննական քերականություն», Արսեն Այրընյան, Մ. Սեբաստյան:

Սովորաբար նոր ձևավորվող լեզվաորակը դժվարությամբ է մուտք գործում գրականություն և դառնում գրավոր հաղորդակցման միջոց: Դա կարելի է պայմանավորել հետևյալ հանգամանքներով. նախ՝ նոր լեզվաորակը չի ունենում հարուստ ու մաքուր բառապաշար, և ապա՝ չի ունենում կա-

նոնարկված քերականական կառուցվածք: Բառապաշարային և քերականական նման հատկանիշներ ձեռք բերելու համար ժամանակ է պետք: Բայց կա նաև մի երրորդ՝ արտալեզվական հանգամանք. դա հասարակական վերաբերմունքն է լեզվի նկատմամբ, որը, ճիշտ է, չի կարող կանգնեցնել, սակայն կարող է դանդաղեցնել լեզվի զարգացման ընթացքը: Արևմտահայերենի պարագայում մտավորականության մեծ մասի կրավորական և բացասական վերաբերմունքը խոչընդոտում էր բառապաշարի մաքրման, մշակման ու հարստացման, քերականական կառուցվածքի կանոնարկման գործընթացներին: Հենց այն հանգամանքը, որ 19-րդ դարի կեսերին գրականության լեզվի շուրջ բորբոքված բանավեճը՝ գրապայքարը, շարունակվեց նաև հետագայում՝ մինչև դարավերջ, ցույց է տալիս, որ հրաժարումը գրաբարից բավականին ցավոտ խնդիր է եղել արևմտահայոց համար, մինչդեռ արևելահայոց մոտ 50-60-ական թվականներին հարցն արդեն լուծված էր հոգուտ աշխարհաբարի: Այնուամենայնիվ, չնայած աշխարհաբարի նկատմամբ նման բացասական վերաբերմունքին՝ այն ժամանակի ընթացքում ընդլայնում էր իր կիրառության սահմաններն ու ոլորտները¹: Մխիթարյանների լեզվական գործունեությունը ուսումնասիրելիս նկատում ենք լեզվական խնդիրների առնչությամբ մոտեցումների տարբերակվածություն: Նրանց մի մասը ստեղծված լեզվական իրավիճակը սթափ է գնահատում՝ առանց զգացմունքներին տրվելու և առանց գերազնահատելու մեկի կամ մյուսի դերն ու նշանակությունը: Դեռևս 18-րդ դարում Մ. Սեբաստացին գրաբարով կամ աշխարհաբարով գրելը շատ բնական է համարում: Պատահական չէ, որ նա է կազմել գրական արևմտահայերենի քերականության առաջին ձեռնարկը (Վենետիկ, 1727), որը ուսումնական նպատակ էր հետապնդում և բոլորովին հեռու էր գիտական լուրջ ուսումնասիրություն լինելուց²: Սթափ ու անկողմնակալ վերաբերմունքի արտահայտություն էր նաև այն, որ արդեն 19-րդ դարի կեսին, չնայած աշխարհաբարի վերաբերյալ վճռական կարծիք չհայտնելուն, Մխիթարյանների միջավայրում ձևավորվում է տեսակետ, ըստ որի պետք չէ աշխարհաբարի քերականական համակարգում բռնի փոփոխություններ և նորամուծություններ անել, այլ «թողլու է ժամանակին, որ գործէ և

¹ Տե՛ս Աճեմյան Վ., Լ., Գրական արևմտահայերենի ձևավորումը, Երևան, 1971, էջ 154-155:

² Մանրամասն տե՛ս Ասոյան Թ., Վենետիկի Մխիթարյանները և աշխարհաբարի հարցերը, Երևան, 2001:

կատարելագործէ աշխարհիկ բարբառը»¹: Մ. Սեբաստացուց սկսած՝ այս գործիչները սկսում են գրել նաև արևմտահայ աշխարհաբարով՝ լուծելով լեզվական առօրյա խնդիրներ ժողովրդին հետաքրքրող հարցերի շուրջ, իրար կէ, ընդունելով նաև գրաբարի առավելությունները աշխարհաբարի նկատմամբ:

Մխիթարյանների մի մասը գրաբար թե աշխարհաբար հարցադրմանը միտումնավոր (տենդենցիոզ) մոտեցում է ցուցաբերում՝ գերազնահատելով գրաբարը և թերազնահատելով աշխարհաբարը: Բարձր գնահատելով գրաբարն իբրև լեզվաորակ, բոլորովին հաշվի չեն առնում լեզվական հաղորդակցման գործընթացում նրա կիրառական անհնարինությունը՝ անհասկանալի դառնալու հետևանքով: Այնուամենայնիվ, կային ոլորտներ ու թեմաներ, որոնց պարագայում դիմում էին աշխարհաբարին՝ հասարակական բոլոր շերտերին հասկանալի լինելու նպատակադրումով: Խոսքը վերաբերում է թատերգությանը, ուսուցմանը և ազգային-հայրենասիրական թեմատիկային: Այսպես, օրինակ, լինելով գրաբարի կողմնակիցներ և հիմնականում ստեղծագործելով գրաբարով՝ Ղ. Ալիշանն ու Մ. Պեշիկթաշյանն իրենց ազգային-հայրենասիրական բանաստեղծությունները գրում էին աշխարհաբարով, որոնք մեծ դեր խաղացին 19-րդ դարի 60-ական թվականներին ծավալված ազգային-ազատագրական պայքարի ընթացքում²: Միաժամանակ խիստ արդիական էին վարժարաններում աշխարհաբարի և աշխարհաբարով ուսուցման հետ կապված հարցերը, մասնավորապես գործնական ջանքեր էին գործադրվում արևմտահայերենի քերականություն ստեղծելու ուղղությամբ: Նշված ժամանակաշրջանում հասունացել էր ինչ-որ կերպ արտահայտելու հասարակական տրամադրությունը և վերջապես, ժամանակն էր գնահատելու, պարզություն մտցնելու գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերություններում, պաշտպանելու աշխարհաբարի իրավունքները: Հանգուցալուծումը Ա. Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատության լույսընծայումն էր 1866թ.³ համակողմանի գիտական ուսումնասիրություն ոչ միայն արևմտահայերենի, այլև ընդհանրապես լեզվի և հայոց լեզվի մասին մասնավորապես: Էդ. Աղայանը,

¹ Սարգիսեան Բ., Երկհարիւրամեայ գրականական գործունեութիւն և նշանաւոր գործիչներ Վենետիոյ Մխիթարեան միաբանութեան, Վենետիկ, 1905, էջ 367:

² Տե՛ս, օրինակ, Ավետիսյան Յու., Արևմտահայ բանաստեղծության լեզուն, Երևան, 2002, էջ 78, Ասոյան Թ., Ղևոնդ Ալիշանի ստեղծագործությունների լեզվական առանձնահատկությունները, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, թիվ 9, Երևան, 2020, էջ 33:

գնահատելով Ա. Այտընյանի հայագիտական գործունեությունը, գրում է, որ նա «իր հետազոտություններով հայերենագիտությունը բարձրացրել է եվրոպական առաջավոր լեզվաբանության մակարդակին»¹:

Ա. Այտընյանի «Քննական քերականության» հրատարակմանը անհամբերությամբ սպասում էին լեզվական իրավիճակով հետաքրքրվող բազմաթիվ մտավորականներ՝ զգալով, որ այն դառնալու է սահմանաբաժան և մեծ մասամբ լուծելու է գրապայքարի հետ կապված բազմաթիվ հարցեր, մանավանդ որ Ա. Այտընյանն իր մի շարք առաջարկություններով նախանշում է աշխարհաբարի նկատմամբ վերաբերմունքը և նրա մշակման ուղղությունները: Այս ուսումնասիրությունը՝ լեզվական հարցերի համակողմանի ու համակարգված լուծումներով, քերականության սովորական ձեռնարկ չէ, այլ հայ լեզվաբանական մտքի հանրագումարն ու գագաթնակետը: Այս առումով ճիշտ դիտարկում է կատարում Ա. Ս. Աբրահամյանը. «Հայոց լեզվի պատմության և նոր գրական հայերենի սկզբնավորման շրջանի խոր ու հանգամանակից քննությունը, ինչպես նաև այդ կապակցությամբ ընդհանրապես լեզվի էության, զարգացման, տարբերակումների և լեզվաբանական այլ իրողությունների՝ Ա. Այտընյանի ըմբռնումները վեր են բարձրանում նրա ժամանակից և շատ կողմերով կապվում են այժմեական լեզվաբանական խնդիրների լուծման հետ»²: Էդ. Աղայանը «Քննական քերականությունը» արժևորում է ոչ միայն ընդհանուր լեզվաբանական տեսական հարցերի արծարծմամբ և հայերենի պատմական զարգացման ու փոփոխությունների քննության ներկայացմամբ, այլև նրանով, որ այն արևմտահայերենի առաջին գիտական քերականությունն է և, որ ավելի կարևոր է, «քերականական այն համակարգը, որ ներկայացված է այդտեղ, արտացոլում է աշխարհաբարի վիճակը անցյալ դարի /19-րդ դարի- Թ. Ա./ 50-60-ական թվականներին, ուստի և աշխարհաբարի պատմությունն ուսումնասիրողների համար նա ելակետային աղբյուր է գրական լեզվի հետագա զարգացման ու մշակման ուսումնասիրության առումով»³:

«Քննական քերականությունը» նպատակ ուներ հնարավորինս լուսաբանելու և ինչ-որ կերպ հանգուցալուծելու գրականության լեզվի հետ կապված խնդիրները, քանի որ, ինչպես ինքն է գրում, «քանի գնաց ծանրագոյն

¹ Այտընյան Ա., Քննական քերականությունն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Նախաբան, Ե., 1987, էջ 3:

² Աբրահամյան Ա. Ս., Արսեն Այտընյանի լեզվաբանական հայացքները, Ե., 1984, էջ 12:

³ Այտընյան Ա., Քննական քերականություն..., Առաջաբան, Ե., 1987, էջ 10:

կերպարանք մ' առաւ այս լեզուի խնդիրը, եւ ցայնժամ իբրեւ լոկ հետաքրքրական բան կամ զուտ բանասիրական զբաղմունք նայուածն սկսաւ վերջապէս ազգային գործոց կարեւոր եւ հաստատուն մասն համարուիլ...» և ապա ավելացնում, որ «...գործոյն հրատարակութիւնն ալ սկսաւ ստիպողական ըլլալ»¹: Գրաբարի և աշխարհաբարի՝ իբրև գրականության հնարավոր լեզուների փոխհարաբերությունները քննելիս Ա. Այտընյանը, ի տարբերություն իր նախորդների և ժամանակակիցներից շատերի, սկզբունքային այլ մոտեցում է դրսևորում: Որպես ճշմարիտ ու խորաթափանց գիտնական՝ Ա. Այտընյանը մերժում է լեզվի կիրառության խնդրին իրավիճակային լուծում տալը, առավել ևս երբ երկու լեզվաորակներն էլ ունեն իրենց պաշտպանները: Ըստ լեզվաբանի՝ գրական լեզվի ընտրությունը պետք էր կատարել՝ հաշվի առնելով գրաբարի և աշխարհաբարի լեզվական առանձնահատկությունները, ծագման և զարգացման, պատմական փոփոխությունների և փոխհարաբերությունների բնույթն ու ընթացքը:

Ա. Այտընյանը ևս փաստում է երկու լեզվաորակի համաժամանակյա առկայությունն ու կիրառությունը, որը «ամէն խնդրէ եւ երկբայութենէ դուրս է», միաժամանակ թվարկում է դրանց տարբերակիչ հատկանիշները. «Հնութեան դիմաց նորութիւն, ճոխութեան՝ աղքատութիւն, մեռելութիւն և կենդանութիւն. ասոնք են մեր հայերէն լեզուներկուքի բաժանող՝ Գրաբար և Աշխարհաբար զանազանող վայրկեանները: Զատ նկարագիր եվ բնավորութիւն, զատ բառից մթերք, տարբեր նշանակութիւն եւ կիրառութիւն, զատ օրէնք եւ քերականութիւն,- և ապա ընդհանրացնելով՝ շարունակում է,- մէկը անցեալ եւ միւսը ներկայ աշխարհիլեզուներ ըլլալով՝ իրենց յատուկ կենցաղական ու գրաւորական կեանքն ունեցած են»²: Բոլոր դեպքերում Այտընյանը խնդրի լուծումը պայմանավորում է գրաբարի և աշխարհաբարի պատմականորեն ընդունելի քննությամբ՝ բացառելով պատահականությունները և ոչ ճիշտ պատկերացումները: Մեռած, անհասկանալի կամ հին և կենդանի, հասկանալի կամ նոր որակումները կարող են հանգեցնել այս կամ այն լեզվաորակի՝ իբրև գրականության և համընդհանուր օգտագործման լեզվի մեխանիկական ընտրության, մի բան, որ անում էին մտավորականներից շատերը՝ ըստ քմաց հակադրելով մեկը մյուսին և առավելությունը տալով նրանցից մեկին, մինչդեռ լեզվի պատմական զարգացումը ենթադրում է ժառան-

¹ Նշված աշխ., Յառաջաբան, էջ 6-7:

² Նշված աշխ., էջ 27-28:



գորդական կապի առկայություն հնի և նորի միջև, որն ուղղակի անցման, փոխհաջորդման և առաջընթացի արտահայտություն է: Ա. Այտընյանը հաստատում է այն փաստը, որ անցյալն այն հիմքն է, որի վրա խարսխվում է նորը:

Գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերության հարցերը Ա. Այտընյանը քննարկում է պատմականորեն՝ ընդունելով այն տեսակետը, որ աշխարհաբարն էլ պատմություն ունի: Բերում է տարածված այն տեսակետը, որ աշխարհաբարը գրաբարի աղավաղման արդյունք է. «...գրաբարի աղավաղութենէն յառաջ եկած նոր հայերէն լեզու մը՝ հետզհետէ այլեայլ գաւառականներու բաժնուած եւ անհամար օտարոտի տարրներով խառնուած, որուն իրաւամբ Ռամկօրեն անուն տրուած է», գրում է նա: Հայոց լեզվի պատմության հարցերին անդրադառնալիս Այտընյանը փորձում է ցույց տալ, որ աշխարհաբարը սաղմնավորվել է դեռևս 5-րդ դարի գրաբարի ընդերքում, իսկ 7-րդ դարում արդեն գրաբարից տարբեր ու կերպավորված լեզվաորակ էր: Ժամանակի ընթացքում, փաստորեն, գրաբարը կորցնում է հասարակական համընդհանուր հաղորդակցման միջոց լինելու գործառույթը և գործածվում է միայն որպես գրականության լեզու, այն էլ գիտնականների և եկեղեցականների միջավայրում, մինչդեռ աշխարհաբարը, թեև բավականին դանդաղ, ընդարձակում էր իր կիրառության ոլորտները: Նշենք նաև, որ Այտընյանը գրաբարն ու աշխարհաբարը միմյանց կապող միջին հայերենը ևս համարում է նոր հայերեն: Այս դիտարկումներն ու հիմնավորումները բացառում են այն տարածված կարծիքը, թե նոր լեզուն օտար է, մեր բուն հայերենը չէ, ի տարբերություն գրաբարի, ձևավորված է գաղթականության արդյունքում և այլն:

Հայտնի է նաև, որ գրական լեզվի ընտրության առաջնահերթությունը որոշելիս մտավորականների մեծ մասը խիստ կարևորում էր նրա գեղեցկությունը, ճոխությունը, կազմակերպվածությունը, կատարյալությունը, և դրանք համարում կարևոր հանգամանքներ գրական լեզվի հարցը լուծելիս: Ա. Այտընյանն էլ ընդունում է գրաբարին տրված այս բնորոշումները, սակայն մտավորականության մի մասի կողմից շրջանառության մեջ դրված լեզվի հարստության, գեղեցկության և կատարելության վերաբերյալ փաստարկը քննության չի դիմանում, երբ հարցին մոտենում են պատմական հայեցակետից: Այսպես մտածողներին Այտընյանը անվանում է ունայնասեր՝ նկատելով, «որ խնդիրը զուտ գործնական է»: Լեզվաբանը այս դեպքում ևս սթափ ու իրատեսական բացատրություն է տալիս. լեզուները «խակ մանկությունից»

են հասնում ոսկեղենիկ հասունության՝ աստիճանական կատարելագործման ճանապարհով, իսկ այնուհետև «տարեաց բեռը վրան ծանրացած ատեն՝ կանուխ կամ ուշ հարկաւ տեղի պիտ' որ տայ եւ ուժէ իյնայ, եւ այնպես տակաւ կոխէ մտնէ ծերութեան հասակը, որմէ մահն ալ շատ հեռու չէ»¹: Մակերեսային համաժամանակյա համեմատությունն էլ հանգեցնում է հետևյալ մակերեսային եզրահանգմանը. մերժել աշխարհաբարը: Փայփայելով գրաբարի վերածնման հեռանկարը՝ առաջարկվում էին լուծումներ, որոնք հանգում էին հետևյալին՝ բացառել աշխարհաբարով հրատարակությունները, անտեսել աշխարհաբարի մշակման գործընթացը, աշխարհաբարի մշակումն իրականացնել միայն այն գրաբարին հանգեցնելու նպատակադրումով²: Ա. Այտընյանն այս առումով այլ համոզմունք ունի. շատ լավ պատկերացնելով լեզուների զարգացման ընթացքը՝ առաջարկում է ուղղակի մշակել և կատարելագործել նոր լեզուն, քանի որ, միևնույն է, ժամանակն աշխատում էր աշխարհաբարի օգտին: Այդպես Այտընյանն առաջադրում է աշխարհաբարի մշակման խնդիրը, որը, ինչպես տեսանք, մերժվում էր նրա որոշ ժամանակակիցների կողմից:

Ա. Այտընյանը մերժում է նաև մյուս ծայրահեղությունը. աշխարհաբարի կողմնակիցները մերժում են գրաբարն այն պարզ պատճառաբանությամբ, որ վերջինս վաղուց սպառել է իրեն և չի կարող բավարարել հասարակության հաղորդակցական պահանջմունքները՝ փաստորեն, կարևորելով լեզվի գործնական-կիրառական արդիականությունը: Գրաբարի վերածնունդը միտված գործընթացը հակապատմական է, առավել ևս եթե այն ուղեկցվում է մեկ այլ հակապատմական՝ աշխարհաբարը մերժելու ձգտումով: Այնուամենայնիվ, ինչպես գրաբարի անկումը գրաբարյանները պայմանավորում էին աշխարհաբարի զարգացմամբ, այնպես էլ գրաբարի վերածնունդը կապում էին աշխարհաբարի անկման հետ: Այս հարցում ևս երևում է Ա. Այտընյանի լայնախոհությունը. ուսումնասիրությունների արդյունքում նա հանգում է այն եզրակացությանը, որ գրաբարի անկման և աշխարհաբարի զարգացման գործընթացները փոխշաղկապված են, պայմանավորված մեկը մյուսով, դրանք հին ու նոր լեզվաորակների բնական զարգացման և փոխհաջորդման արգասիք են: Ավելին, Այտընյանը ոչ միայն չի մերժում գրաբարը, այլև կարծում է, որ գրաբարի առկայությունը ուղղակի շնորհ է, որով-

¹ Նշված աշխ., էջ 36:

² Տե՛ս Աճեմյան Վ., Գրական արևմտահայերենի ձևավորումը, Ե., 1971, էջ 163-164: Նաև՝ Աբրահամյան Ա.Ս., Արսեն Այտընյանի լեզվաբանական հայացքները, Ե., 1984, էջ 164-165:

հետև դրանով հայ ժողովրդին է փոխանցվում մշակութային մեծ հարստություն և ի վերջո, լեզվի հարցը չպետք է որոշվի զգացմունքներին տրվելով, միակողմանիորեն կամ հաշվի առնելով միայն հասկանալիության հանգամանքը, չէ՞ որ Մտավորականության, բանասերների համար գրաբարը ընդհանրապես հայերենի համակողմանի ուսումնասիրության համար լայն հեռանկարներ է բացում: Հմուտ բանասերը բազմաթիվ պատկերավոր օրինակներ է բերում՝ ցույց տալու համար, որ չի կարելի հանուն գեղեցկության պարտադրել հինը, որ նորն էլ իր արժանիքներն ունի և նոր ժամանակներին է համապատասխան:

Աշխարհաբարի՝ գրական լեզու դառնալու հանգամանքը Ա. Այտընյանի համար արդեն կատարվող իրողություն է, մի բան, որ չէին ուզում տեսնել գրաբարյանները և նույնիսկ աշխարհաբարի նկատմամբ դրականորեն տրամադրված շատ մտավորականներ: Հետաքրքիր է նրա հետևյալ դիտարկումը. «Ստոյգ է՝ արդի հայերեն լեզուն իւր ներկայ վիճակին մէջ մեծ պահանջմունքներ չի կրնար ունենալ, որ մենք իրեն գովասան հանդիսանանք, սակայն լեզուի մը, որուն գլխաւոր առաւելութիւնը իւր հարկաւոր ըլլալն է, և որն որ իւր փոքրկութեանը մէջ կրնայ մեզի մեծ ծառայութիւններ ընել, գոնէ արդար պաշտպանութիւն պարտական ենք»¹: Աշխարհաբարի նկատմամբ ժխտողական ու աննպաստ վերաբերմունքը նա բացատրում է, «թէ միայն անմտադրութիւնը կամ թերակատար քննութիւնն է ինչպէս շատ ուրիշ բաներէ նոյնպէս այս մեր լեզուէն ալ զգացած վախներուս պատճառը»²: Տողատակում խոստովանում է նաև, որ «քանի մը նոր խիստ կարեւոր լեզուագիտական տեղեկութիւններ չունեցած՝ աշխարհաբարին ծագմանն ու բնութեանը վրա շատ նուաստ համարում ունեինք»³:

Ըստ Այտընյանի՝ «վախերը» կարելի էր հաղթահարել, «եթէ մոռցած չըլլայինք, որ վերջապէս մեր լեզուն է արդի հայերենը կամ աշխարհաբարը, մանավանդ երբ որ մեր ձեռքն է անոր խոտելի /օտար/ մասը սրբել ջնջել եւ յարդարեալ կերպարանք մը տալ, շատոնց հաշտուած կըլլայինք նոր լեզուին»⁴: Բոլոր դեպքերում նախատինք չպետք է համարվի «նոր աշխարհքի մէջ նոր մշակուած լեզու մ' ունենալ, զորն որ դեռ անկերպարան ու թերակա-

¹ Այտընյան Ա., նշվ. աշխ., Ե., 1987, էջ 306-307:

² Նույն տեղում, էջ 307:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 308:

տար անմշակ վիճակին մէջ Հեթմանք ու Ներսիսեանք չխորշեցան խօսիլ»¹: Նկատի ունի իր այն տեսակետը, որ աշխարհաբարի սկիզբը 10-րդ դարն է:

Աշխարհաբարի նկատմամբ իր սթափ դիրքորոշումն արտահայտելով և նրա առկայությունն ու կիրառությունը անհրաժեշտ համարելով՝ այնուամենայնիվ, գիտնականը հիշեցնում է նաև, որ իրեն «գգրաբարը խափանելու հակեալ կողմը» չդասեն: Ըստ էության, հնարավոր էլ չէ դասել, որովհետև նա ընդամենը փորձում է լեզվական հանգամանալից ուսումնասիրությունների հիմքով տեսականորեն հիմնավորել մեր լեզվի զարգացման առանձնահատկությունները:

Ա. Այտընյանը կատարում է նաև գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերությունների համաժամանակյա քննություն՝ անդրադառնալով նաև դպրոցներում լեզվի ուսուցման կազմակերպման խնդիրներին: Նախ, նա համոզված է, որ օբյեկտիվորեն գրաբարը վերակենդանացնելը այլևս անհնար է, այն մեկընդմիջտ մնացել է անցյալում, ապա՝ գրաբարը վերածնելու սուբյեկտիվ ձգտումները կարող են վնասել հենց գրաբարին, որովհետև անխուսափելի են աղավաղումները՝ գրաբարին չտիրապետելու և նրա բառապաշարի ու քերականական իրողությունների շատ կողմերին չիմացության պատճառով: Պակասող օղակները վերականգնելու փորձերը կարող են միայն նոր խանգարումներին տեղիք տալ: Ուրեմն «գրաբարն իւր ուժոյն եւ վայելչութեանը մէջ պահելու միակ միջոցը զինքն իւր սրբազան վիճակին մէջ պահելն է, եւ ոչ ռամկին բերանը թողուլ»², հակառակ դեպքում շատ ցավալի կլինի, «որ աչուրնիս կը դարձնենք կը տեսնենք, որ հիմակուան աշխարհաբարը թող տալու համար գրաբարն ալ կորսնցուցեր ենք, եւ այն ատենն է բան անմխիթար մորմոքելու ժամանակնիս, երբ մտածենք, որ մենք մեր ձեռօքը քանդեցինք գրաբարը»³: Հետևում է ընդհանրացում-եզրակացությունը. «Գրաբարի աղաւաղութիւն է աշխարհաբարի ջնջումը» և ապա «Նոր ուղի մը չի կրնար հին լեզուաւ վարուիլ»:

Գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերությունների հարցերը տեսական արծարծումների շրջանակներից վաղուց դուրս էին եկել և լուծում էին ստանում հենց գործնականում՝ չնայած խոչընդոտող բազմաթիվ հանգամանքներին: Զարմանալի մի բան էր կատարվում. ժամանակը առաջ էր մղում աշխարհաբարը, որը գնալով ընդարձակում էր իր դրսևորման ոլորտ-

¹ Նույն տեղում:

² Այտընյան Ա., նշվ. աշխ., Նախաշափո, Ե., 1987, էջ 266:

³ Նույն տեղում, էջ 298:

ները, դա հասկանում և ընդունում էին բազմաթիվ մտավորականներ՝ Մ. Սեբաստացուց սկսած, սակայն այդպես էլ աշխարհաբարի քերականությունը՝ որպես ուսուցման առարկա, պաշտոնապես չէր ընդունվում ուսումնական խորհուրդների կողմից (բացառենք առանձին անհատների նախաձեռնությունները): Աշխարհաբարը դպրոցական ծրագրերում չներառելու պատճառը վարչական մարմինների անբարյացակամ վերաբերմունքն էր նոր լեզվի նկատմամբ և ժամանակի առումով չարդարացված ու ավելորդ գրաբարասիրությունը¹: Ա. Այտընյանը անդրադարձել է նաև այս խնդրին: Նրա դիտարկումները հիմնավորվում են սեփական փորձով: Երկարամյա աշխատանքը ուսումնական հաստատություններում թույլ տալիս կատարելու գործնականում ճիշտ եզրահանգումներ:

Գրաբարը գրաբարով սովորելու, յոբացնելու տարածված պրակտիկան վաղուց արդեն չէր արդարացնում իրեն և ավելորդ ծանրաբեռնվածություն էր աշակերտության համար, որը համառորեն չտեսնելու էին տալիս կրթության կազմակերպիչները: Հայտնի է, որ դեռևս 18-րդ դարի սկզբում ձևավորվել էր այն գաղափարը, որ կարելի է աշխարհաբարի միջոցով գրաբարը սովորել (Մ. Սեբաստացի), աշխարհաբարն այդպես կդառնար «դուռն քերականության», այսինքն՝ կապահովեր մուտքը գրաբարի քերականություն²: Ըստ էության, Ա. Այտընյանն էլ այս տեսակետի հետևորդներից և հիմնավորողներից մեկն է, որը գրաբարի ուսուցման ոլորտում եղած անհաջողությունները պայմանավորում է նախապատրաստական աշխատանքների բացակայությամբ: Ա. Այտընյանը բազմիցս հաստատում է գրաբարի կարևորությունը, նշում, որ «ազգին ընդհանրութենէն դուրս չենք տարագիր ըներ գրաբարը եւ սահման ցուցըներ իրեն վանքերու որմունքը կամ ճեմարաններու սրահները», միաժամանակ ընդունում է, որ «այո՛, կարդարանան դժգոհութիւններն, որ կը բամբասեն գրաբարի լծոյն խստութիւնը, աւելորդ ծանրաբեռնութեան տուած յոգնութիւնը, ցամաք յարատեւութեան բերած տաղտկութիւնը, անկենդան լեզուի մը կենդանեաց սահմաններումնէջ յաճելուն դժպատեհութիւնը»³: Նշված արդարացի դժգոհությունները կարելի է հաղթահարել «աշխարհաբար լեզուի քերականութիւն սորվելէն ետքը»,

¹ Տե՛ս Աճեմյան Վ., Նշված աշխ., էջ 167-168:

² Տե՛ս Ասոյան Թ., Վենետիկի Մխիթարյանները և աշխարհաբարի հարցերը. 18-19-րդ դդ., Ե., 2001:

³ Այտընյան Ա., Նշվ. աշխ., Նախաշափող, էջ 310:

որովհետև «յանկարծ քերականութիւն եւ գրաբար մէկտեղ սորվեցընելն էր սխալմունքը»¹:

Ա. Այտընյանը անում է հաջորդ հետևությունը. եթե աշխարհաբարը կարևոր էր գրաբարի համար, ապա գրաբարն էլ կարևոր է աշխարհաբարի համար: Ասվածն արդարացվում է հենց 19-րդ դարի կեսերին ծավալված աշխարհաբարի քերականական կառուցվածքի կանոնարկման և հատկապես բառապաշարի մաքրման բուռն գործընթացով, որը դիտվում էր որպես ազգային-ազատագրական պայքարի կարևոր բաղադրիչ: Այս դեպքում սնուցիչը գրաբարն էր: «Եթէ կուգես աշխարհաբար աղէկ գրել, գրաբար պէտք է գիտնաս, եթէ կուգես աշխարհաբար քաջ ու հիմնովին գրել, գրաբար պէտք ես քաջ ու հիմնովին գիտնալ»², -եզրակացնում է նա:

Գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերությունների հետևողական վերլուծությունները աստիճանաբար հանգեցնում են աշխարհաբարի մշակման խնդրին: «Դպրոց, գործածութիւնք, հրատարակութիւնք՝ ստիպեցին զնոր աշխարհքը՝ նախ աշխարհաբարն ընդունելու եւ յետոյ մշակելու», և սա աներկբայելի ու բնական հետևություն է ըստ Ա. Այտընյանի³: Նա նշում է այն ուղիներն ու միջոցները, ըստ որոնց պէտք է զարգանար աշխարհաբարը: Լեզվի ինքնին զարգացումը դեռևս բավարար չէ, նրա զարգացման համար անհրաժեշտ է նաև գիտակցական մոտեցում, «մշակի մը ճարտար ձեռք», եթե ուզում ենք, որ աշխարհաբարն էլ լինի գեղեցիկ ու ճկուն, ինչպես գրաբարը: Լեզվի մշակության գործիքներ կարող են լինել «խնամով եւ մտադրութեամբ շարադրուած գրութեանց յաճախութիւն, քերականութիւն ու բառարան»: Լեզվի մշակման կարևոր ուղղություններից մեկը Ա. Այտընյանը համարում է օտարաբանություններից լեզուն մաքրելը:

Այսպիսով, ներկայացնելով Ա. Այտընյանի տեսակետները գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերությունների վերաբերյալ 19-րդ դարի 60-ական թվականների կտրվածքով՝ կարող ենք փաստել, որ Ա. Այտընյանը այն առաջադեմ մտավորականներից էր, որ լեզվական հարցերում ցուցաբերում էր սթափ ու կշռադատված մոտեցում թե՛ տեսականորեն, թե՛ գործնականորեն: Նրա «Քննական քերականություն»-ը արևմտահայերենի լավագույն ուսումնասիրություններից է, որտեղ քննվում են ոչ միայն արևմտահայերենին վերաբերող համաժամանակյա հարցերը, այլև հայերենի պատմությանը,

¹ Նույն տեղում, էջ 312:

² Նույն տեղում, էջ 313:

³ Նույն տեղում, էջ 332:



բարբառներին, լեզվաբանության տեսությանը առնչվող բազմաթիվ իրողություններ՝ հարստացնելով հայ լեզվաբանական միտքը և հայ լեզվաբանությունն էլ բարձրացնելով համաշխարհային լեզվաբանության մակարդակի:

ISSUES OF RELATIONSHIP BETWEEN GRABAR AND ASHKHARHABAR IN A. AITNYAN'S WORK "ANALYTICAL GRAMMAR OF ASHKHARABAR OR NEW ARMENIAN LANGUAGE"

ASOYAN TATUL

*PhD in Philology, Associate Professor,
Dean of the Faculty of Philology, GSU
e-mail: asoyan.60@mail.ru*

The development of new literary Armenian was in many respects conditioned by the historical, socio-political situation, the orientation of the intelligentsia and cultural figures. The representatives of Mekhitarist Congregation were engaged in the formation, development and regulation of the Western Armenian language as a new literary language, but their activities in this area were carried out by comparing, evaluating new and old literary languages and, accordingly, opposing their practical application.

The article presents the views of A. Aitnyan, a well-known member of the Mekhitarist Congregation in Vienna, on the historical development and changes of the Armenian language, on the linguistic features of the ancient Armenian and new literary languages, on public and personal perception of their use. The impartial approach of the linguist to the most important issues of concern to Western Armenian intelligentsia is presented. From this point of view, A. Aitnyan's "Analytical Grammar" is a very valuable contribution to the studies of the Armenian language.

Key words: *new Armenian, Grabar, linguist, Mekhitarists, grammar, linguistic views, "Analytical grammar", Arsen Aitnyan, M. Sebastatsi.*



ВОПРОСЫ ВЗАИМООТНОШЕНИЯ МЕЖДУ ГРАБАРОМ И АШХАРАБАРОМ В ТРУДЕ А. АЙТНЯНА «АНАЛИТИЧЕСКАЯ ГРАММАТИКА АШХАРАБАРА ИЛИ НОВОАРМЯНСКОГО ЯЗЫКА»

АСОЯН ТАТУЛ

*Кандидат филологических наук, доцент,
Декан филологического факультета ГГУ
e-mail: asoyan.60@mail.ru*

Процесс развития нового литературного армянского языка во многом был обусловлен исторической, общественно-политической ситуацией, ориентацией интеллигенции, деятелей культуры. Задачами формирования и развития и упорядочения западноармянского языка, как нового литературного, занимались представители Конгрегации Мхитаристов, однако их деятельность в этой сфере велась путем сравнения, оценки древнеармянского и нового литературного языков и, соответственно, противопоставления их практического применения.

В статье представлены взгляды известного члена венской конгрегации Мхитаристов А. Айтняна на историческое развитие и перемены армянского языка, на языковые особенности древнеармянского и нового литературного языков, на общественное и личное восприятие их применения. Представлен беспристрастный подход лингвиста к важнейшим вопросам, волнующим западноармянскую интеллигенцию. С этой точки зрения безусловно ценным вкладом в арменоведение является «Аналитическая грамматика» А. Айтняна.

Ключевые слова: *новоармянский, грабар, языковед, мхитаристы, грамматика, языковые взгляды, «Аналитическая грамматика», Арсен Айтнян, М. Себастиан.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 25.08.2021թ.:

Հոդվածը գրախոսվել է 22.09.2021թ.: